

ԿՐԿՆԱԳՐԱՆԻ ԳՅՈՒՆՆԵՐԻ ՔԵՆՏՐՈՆԱՅ

Գ Ի Ա Ք Ա Ղ

- Դագայն՝ դըրուած յեկեղեցին, կը լըսուին
 Երզնէհոնին, աղքատաց ¹ ձայն արխրաղին .
 Դըրան առաջ ծեր Դիաթաղն, կէս — հարբած ,
 Բըրիչը ձեռք, կանգնած , կամաց մըրմըռաց .
- » Դու իմ՝ բըրիչ, ծառայակիցս անբաժան ,
 - » Ահա չորս հատ բացինք մօտերս գերեզման ,
 - » Առջին, երկրորդ. եղան հանգիստ աղքատաց ,
 - » Իսկ այլ երկուք՝ պահարաններ իշխանաց :
 - » Այսօր ահա, անուանի ոմն է մեռած ,
 - » Այդ է եղել նորա ճակատը գըրուած ,
 - » Թողուց զընաց կընիկ, տըղայք այրի, որբ .
 - » Այ խեղճ կընիկ, ինչ լաց կ'անէ, ինչ ճիչ, ողբ :
 - » Թող տուր որ լայ, կու լայ, կու լայ, կը դադրի .
 - » Այժմ սուգի է ժամանակ, աղօթքի .
 - » Քիչ ատենէն իմաստասէր մարդու պէս
 - » Կը հասկընայ ամենայն ինչ պարզապէս :
 - » Զոր օրինակ, — զընենք թէ մէկը մեռաւ . . .
 - » Դիաթաղին համար նոր գործ բացուեցաւ .
 - » Պակսեցաւ մէկն . . . կարծես այդ մի կորուստ է .
 - » Այլ եթէ մարդ լուռ մըտած է . . . մեծ հոգ չէ :
 - » Մարդս ըստեղծուած է Աստուծմէ բանական .
 - » Զ'ըլլար թաղել ըզնա՝ ինչպէս մի անբան .
 - » Ժամահարին, դիաղարդին, կանթեղի,
 - » Մովի, խունկի՝ պէտք է սր փող վըճարուի :
 - » Քահանային ժամուց պիտի, շարական
 - » Ողբ ասողներ, հարկ է որ վարձ ըստանան ,
 - » Նոյն դիաթաղն . . . իրաւ տըխուր է այն մահ ,
 - » Այլ սրչափ մարդ ունին անկէ իրենց շահ :
 - » Մէկուն վընասն՝ շատին կ'ըլլայ շահաբեր ,
 - » Զի մենք ամէնքս՝ Աստուծոյ մօտ՝ ենք ընկեր :
 - » Իսկ երկրիս խոր, զի, ոսկորներ կը փըտտին ,
 - » Հոգ կը դառնան : — Այլ տես վիճակ ցաւաղին .
 - » Պատանեկին սիրտ կը պատէ իսայթիչ օձ .
 - » Զագիր մի գորտ բոյն կը գընէ կուսին ծոց ,
 - » Մըտնալով մուկն իմաստունին ախանջէն
 - » Մըծէ, ուտէ ուղեղն և գծուծըն զամէն :
 - » Կը մըլթնին աչքս . . . Այլ ինչ անես չըկայ ճար .
 - » Զի ոչ միայն մարդ մըտացի, բանավար ,
 - » Այլ Աստուծոյ ստեղծուածք են նա և որդիր ,
 - » Նոյն սողուններ, նոքա նոյնպէս կ'ուղեն կեր :

¹ Սովորութիւն է առ Լէհս, երբ եկեղեցւոյ մէջ ննջեցելոց պաշտամունք կը լինին. գրան առաջ աղքատք, աղօթք և սաղմոս կը քաղեն տիուր եղանակելով :

- » Բայց դիակէն մէկ ուրիշ շահ կայ մարդոց .
- » Քսայրայելով դագաղն ու ոսկերք հողուն ծոց ,
- » Գերեղմանին հողը կ'անեն արգաւանդ ,
- » Կանաչ և խոտ՝ միշտ առատ կը լինին անդ :
 » Հոգը միայն . — անօրինին դիակին
 » Վըրայ՝ եղիճ և այլ շար խոտք կը բուսնին .
 » Իսկ ուր արդարն երկրիս 'ի ծոց կ'ըլլայ քուն ,
 » Մըրզարեր թուփ , ծաղիկք ծըլին շատ սիրուն :
- » Կամ՝ գեղեցիկ ծառ մի կ'ենէ ճիւղազարդ ,
- » Ժամանակին տալով պըտուղ բարդ 'ի բարդ .
- » Եւ այլ ուրիք կ'արօրագրեն գերեզման ,
- » Ու կ'անեն հոն կարգաւորեալ վարուցան :
 » Շուտ կը բուսնին ցորեններու հասկք ատրք .
 » Ի՛նչ երևոյթ աչքի հաճոյ և տեսք .
 » Հասկաքաղ կոյս ոսկի որայն կապելով՝
 » Իւր հօր շիրմին վըրայ շարէ նա կարգով :
 » Թո՛ղ որ որդերն ուտեն ըզդին անկենդան
 » Քանի որ հոն պիտի բուսնի հաց - ցորեան ,
 » Տուր աղքատիս սյդպէս վախճան , Աստուած իմ ,
- » Գերեզմանէս թող մերձաւորքըս շահուին :
 » Ի փառքս քս ընդունէ , ո՛վ գըլթած Տէր ,
 » Գեռ մանկութեանս քաշած վըշտերս , նեղ օրեր ,
 » Նոյն և այժմեան պատառտին հայաւովս
 » Յուրտէն մըսիլս , և շատ անգամ կըրած սովս :
 » Երեկուան օրն , անոյշ կերպով , մեր Տէր - Հայր
 » Տուաւ ինձի համբերութեան մըխիթար .
 » Թէ՛ Այս աշխարհք քաշածներուդ 'ի փոխան
 » Պի տայ Աստուած երկնից վայելքն անվախճան :
 » Թէ որ կ'ուզես զիս վարձատրել , Ողորմած ,
 » Ես գո՛հ կ'ըլլամ՝ ընդունելով զայս մի վարձ ,
 » Տուր որ բուսնին , ապագայիցըս համար ,
 » Ոսկորներէս՝ ցորեն , ծաղիկ . . գէթ հաճար » :

ՍԵՐՈՒՄԵՐ

ԱՌ ՄԱՏԵՆ ԱԳԻՐՆ

Տաժանելի է քո վաստակ , նըսիհ քոյին խըստաւար ,
 Զօրաւոր է քո թըշնամին , փըշալից քո ճանապարհ .
 Այլ ճանապարհ նախանձելի՛ . զի դու զհանճար և ըղբան ,
 Նաև զողիդ բարեծանոց , նոյն և ըզսիրտ կորովի ,
 Զո՛հ ողջակէզ ետուր զամէն Գաղափարին դերբնական . . .
 Խուժան ուսմկին խաղայ ըզքև , յանըզբաստից գայ զձաղու .
 Զի մերկ 'ի զըուխ , հանգոյն ինքեան՝ ոչ ծըխես խունկ Բահազու :
 Վասըն քո՝ նա ոչ է աստուած , այլ զըրօշեալ ճարտարի ,
 Ի պատուանդան կանգնեալ խախուտ : Անդ ցըլանայ վերագոյն
 Քո՛ ըղձալին գեղեցկութիւն , սերտ Գաղափարն գերաբուն :
 Թո՛ղ , զի ուսմիկն աղմըկեայի , այդ են օրէնք բընութեան ,

Նոյն և բաժին . . . Յիշեալ, յորժամ ազատութեան մեծ Արքայն
Երևեցաւ, Փրկիչ սեռիս առ հասարակ մարդկութեան,
Դա՛ այդ խոժան դռնեաց ժըպերհ՛ « Ի խաչ ըզքա, 'ի խաչ հան » :

Վ. ԹԻՒՌՆՈՎ

ԱՌ ՊՈՒԷՏՆ

Ողբա՛ քընար եղերերգակ, ձայն տուր երգողդ համարձակ,
Հանդոյն ալեաց ծովականաց, տա՛ր մերձեցո՛ւ զքո դաջնակ
Առ սիրտ ի՛րմբրեալ . մինչև դահիճ քոյ, բաղդ զըժխեմ, զարթուցեալ
Ջախնախեսցէ ըզքո քընար, զաղիս նորին կրտրատեալ :
Թող, խառնաղանճ զժաղու գայլէ՛ ըզքեզ եզեալ նըշաւակ,
Խուժանին ծաղր ընդ հուպ փոխի քեզ ի պըսակ անթաւամ,
Եւ նախատինք ինիցին քեզ փառք և պատիւ մըշտընջեան :
Այլ թէ՛ մի վանկ յողբականաց սըրտազգեցիկ քոց երգոց
'Նդհարեալ 'ի սիրտ մահկանացուաց, ըզճըշմարտէն ըզպայնոց,
Կաթիլ մ'ևեթ թէ՛ արտասուք հեղցի երգողդ յարձագանք,
Անմահ իցես, դու ո՛վ Պըւէտ, հասեր փառաց քոց 'ի ծագ :

Ն. ԸՇԵԿԻՐՈՎ

Ի ԺԱՄ ՀԱՆԳՍՏԵԱՆ

Ոչ աստ զայրոյցք և ոչ կըռիւ և ոչ կագ, վէճ անվախճան,
Աստ՛ լըուութիւն, խաղաղութիւն . աստ՛ շունչ ազատ առնում տամ,
Շուրջ պար առեալ յազգականաց, որոց սիրտք են պարզ, մաքուր,
Ձի՛ աստ հանգիստ հաճոյական, յանկուցանող, սըրտի զիւր :

Սմենայն ինչ աստ շընչէ սէր, և սըրտազին ամենայն,
Ապընջական տունս հիւրընկալ, և ընտանիք պատուական .
Հեզ և համբոյր երկնից կամար, և արեգակն ոսկեգոյն,
Վարդ նորաբաց աճիւնաճիւղ, և սոխակին երգ սիրուն :

Ի բուրաստան մանկանց երամ ման 'ի մանի գան 'ի պար,
Եւ նոր հասակք 'ի պատըզամբ կան ժողովեալ ի գումար .
Յերեկոյն յայերս լըսին նոցուն հըրճուանք և ծիծաղ,
Ընդ պատուհանս 'ի դուրս սուրան գաշնամուրին մատանց խաղ :

Ի վեր գաչերս թէ՛ համբառնամ՝ 'ի ծանօթ շէնս, տեսանեմ՝
Ջամպն զեղանի վարդակարմիր, որ զարևմուտս նըկարէ .
Բըլբը կայտոին վերջալուսով, նըսեմանան վայրք ցածունք,
Լըսի կարկալ՝ ալեաց գետոյն, և եղեգանցըն խօշիւն :

Թէ՛ շուրջ հայիմ, աչք զեղանի մանրիկ մանկանց գիւղական՝
Իբրև ծաղիկք գարնանայինք, վառին լուսով կենսական .
Նոյն իսկ այերք չընչեն մեղմով, հաճոյական և գողորիկ,
Ի սըրտիս խոր՝ յակամայից յառնեն նոր յոյսք և նոր կիրք :

Վասըն աւուրցըն առաջնոց, որք թիւր անցին հոլովեալ
Ձիղ՝ ըզքամ յիս, և եմ պատրաստ՝ ներել զայլոց ևս սըխալ .
Ըզգառն ամէն առ ոսն հարեալ, պէս սըղայոց՝ կամիմ՝ ես
Եւ հաւատալ և աղօթել, և ունեւ սէր սուրբ անկեղծ :

Ն. ԸՇԵԿԻՐՈՎ